ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ապրիլի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի օգոստոսի 7-ի №296Ա որոշմամբ «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Վենտուս-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0650 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0650 լիցենզիա)՝ մինչև 2041 թվականի նոյեմբերի 8-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 8-ը,

բ) Հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 29-ի №486Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 1-ին կետով ԼԷ №0650 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգվել է մինչև 2022 թվականի հոկտեմբերի 8-ը, ինչից ելնելով՝ Որոշման 2-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի նոյեմբերի 22-ը գործողության ժամկետով,

գ) Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքի ներկայացման պարտավորությունը Որոշմամբ սահմանված ժամկետում՝ այն է մինչև 2022 թվականի փետրվարի 22-ը, Ընկերության կողմից չի կատարվել, ինչի արդյունքում նշված փաստի ուսումնասիրության նպատակով Ընկերության նկատմամբ 2022 թվականի փետրվարի 13-

ից հարուցվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 23-ի №ԳԲ/34.1-Մ2-5/575-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը, հարուցված վարչական վարույթի շրջանակում, սույն թվականի մարտի 2-ի գրությամբ հայտնել է, որ դեռևս 2022 թվականի հունվար ամսվանից բանակցություններ է վարում մի շարք բանկերի հետ համապատասխան բանկային երաշխիք ստանալու համար և առավելագույնը տասն աշխատանքային օրվա ընթացքում կներկայացնի Հանձնաժողով համապատասխան բանկային երաշխիքը, այնուհետև, ի կատարումն Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ 2022 թվականի մարտի 22-ի գրությամբ ներկայացրել է երաշխիքը,

ե) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Որոշմամբ սահմանված երաշխիքի ներկայացման պարտավորությունը, մինչդեռ մինչև պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի որոշման ընդունումը, վերացրել է թույլ տված խախտումը՝ Հանձնաժողով ներկայացնելով Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը, և այդ խախտման հետևանքով չի վտանգվել և չէր կարող վտանգվել համակարգի անվտանգությունը կամ հուսալիությունը, այն ուղղակիորեն չի հանգեցրել մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման, լիցենզիայի պայմանների կոպիտ խախտման, այլ կարգավորվող անձի օրինական շահերի խախտման, կարգավորվող գործունեության խոչընդոտման կամ լիցենզիայի պայմանների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, և առկա չէ խախտման կատարման կրկնակիություն: Տվյալ դեպքում, Հանձնաժողովը գտնում է, որ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի փետրվարի 23-ին հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ

կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ապրիլի 2022թ.